

ԱՆԳԻՒՑԻ ՀՆՂԻՆԱԿՆԵՐ ԱԳԻՍՈՆԻ ԵՎ ՍՏԻԼԻ ՊԱՏՄՎԱՅՔՆԵՐԸ
«ԱԶԳԻԱՐԱՐՈՒՄ»

Մ. Մ. ՍՍԼԱՆՅԱՆ

«Ազգարարի» առաջին համարներում ապագրված «Միրզայի տեսիլքը»¹ և «Սանտոն Բաոսիսայի պատմությունը»² գեղարվեստական արձակ երկերը, ինչպես և «Փոքրիկ Ջեկի պատմությունը» վիպակը անանուն են տպագրվել Ստեփանյան եթե վիպակի թարգմանություն լինելը նշվել է («Թարգմանեալ յանգլիացի»), հանգամանք, որը անկասկած դյուրացրել է հեղինակի ինքնությունը պարզելու խնդիրը³, ապա այս երկու գործերի առնչությամբ նման նշանակություններ չեն արվել Սյո պատմվածքների ոչ հայկական ծագման մասին կարելի էր միայն կռահել։ Հերոսների անունները, գործողության վայրը և այլ հատկանիշները հուշում էին, որ գործ ունենք XVIII դարում շատ տարածված «արևելյան պատմվածքի» հետ և որ, ամենայն հավանականությամբ, դրանք արևելյան սյուժեների անգլիական մշակումների թարգմանություններն են, քանի որ այն ժամանակի հնդկահայ գաղութի համար ավելի բնութագրական էր արևելյան գրականության հետ առնչվելը։

Պարզվում է, որ պատմվածքների հեղինակներն են XVIII դարի սկզբի անգլիացի հանրահայտ գրողներ Ջոզեֆ Ադիսոնը (Joseph Addison, 1672—1729) և Ռիչարդ Ստիլը (Richard Steele, 1672—1729)։ Ստիլի և Ադիսոնի պատմաման երախտիքն այն է, որ նրանք անգլիական պարբերական մամուլի հիմնավորողները հանդիսացան։ Իրենց պարբերականները՝ «Շատախոս» («The Tatler», 1709—1711), «Հանդիսատես» («The Spectator», 1711—12, 1714), «Խնամակալ» («The Guardian», 1713) և այլն, նրանք ծառայեցին լուսավորության և դարի բարոյաէթիկական իդեալների իրականացման նպատակներին։ Ստիլի և Ադիսոնի պարբերականները XVIII դարում գրքերի ձևով թարգմանվեցին եվրոպական շատ լեզուներով։ Ադիսոնը XVIII դարում նրանք մի շարք երկրներում հետևորդներ ունեցան (Բրեյտինգերը՝ Շվեյցարիայում, 1721, Գոտշեդը՝ Գերմանիայում, 1725—1727, Պրեմիոն՝ Ֆրանսիայում, 1733—1740 և այլն), որոնք, իհարկե, սոսկ ընդօրինակողներ էին, այլ իրենց երկրների լուսավորության գործի պիոներները, որոնք հենվելով անգլիական առաջին պարբերականների փորձի վրա, ջանում էին լուծել սեփական ազգային պրոբլեմները։ Այդպես էլ Ռուսաստանում Ն. Նովիկովը իր հիմնած երգիծական «Պորտաբույծը» («Портень», 1769) պարբերականում սկսեց հրապարակել նրանք քննարկել Ռուսաստանի քաղաքական կյանքի ցավոտ հարցերը։ «Ազգարարը» ծառայում էր հայ գաղութի լուսավորության գործին։

Ադիսոնը և Ստիլը իրենց հումորիստական և երգիծական էսսեներով XVIII դարի Անգլիայի ժամանակագիրները դարձան։ Բարբերի, կենցաղի, մարդկային բնավորությունների նրանց տիպական նկարագրությունները հող նախապատրաստեցին Ռիչարդսոնի, Սմոլեթի, Ֆիլդինգի ռեալիստական վեպերի համար։ Լինելով անգլիական վաղ լուսավորության ներկայացուցիչներ,

1 Տեսիլ Միրզային, նշանակիչ բնութեան մարդկային կենաց. — «Ազգարար», Մադրաս, 1794, № 1, էջ 7—10։

2 Պատմություն Սանտոն Բաոսիսային նշանակիչ բնութեան մարդոցն լինելն օժանդակ առ շարն. — «Ազգարար», № 2, էջ 65—68։

3 Տե՛ս Մ. Մ. Ասլանյան. Ռուսոյի անգլիացի հետևորդը «Ազգարարի» էջերում. — «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 3։

Ստիլը և Աղիսոնը լի էին լավատեսությամբ, հավատում էին, որ բուրժուական կարգը բնական և միակ հնարավորն է, որ այն կառելի է բարեկամել խրատելով և հասարակական արատները ծաղրելով: Նրանք հավատում էին մարդու բարի էությունը: Ջ. Լոկկի էթիկայի հիմնական սկզբունքը, թե՛ «մարդկային երջանկության և ապերջանկության առաջին պատճառը ինքը մարդն է», Ստիլի և Աղիսոնի ստեղծագործության ելակետը հանդիսացավ:

«Բնությունը և բանականությունը տանում են մեզ մի ուղղությամբ, իսկ կրքերը և քմահաճույքները՝ մի այլ, — գրել է Աղիսոնը, — եթե մենք ընտրենք առաջին ուղղությունը, ապա ճանապարհը հիասքանչ կլինի և նպատակը հեշտ հասանելի»⁴: Այստեղից էլ նրանց ձգտումը լուսավորել և բարոյապես կատարելագործել ժամանակակիցներին: Սրանով էլ պայմանավորվեց նրանց հետաքրքրությունը մարդկանց առօրյա կյանքի և ապրելակերպի հանդեպ:

Աղիսոնի և Ստիլի երկերի տպագրությունը «Ազդարարում» վկայում է, որ հայ առաջին լրագրողները, ընթացիկ օտարալեզու (հիմնականում անգլիական) պարբերականներին ծանոթ լինելուց բացի (որոնցից նրանք միջազգային քաղաքական անցուղարձերի մասին և այլ բնույթի տեղեկություններ էին քաղում), ծանոթ էին և մամուլի պատմությանը, ինչպես նաև նրա ռազմիրանների ստեղծագործությանը: Հետաքրքիր է, որ Շմավոնյանը և հայ թարգմանիչները ընտրել են ոչ թե Աղիսոնի և Ստիլի անգլիական կյանքը պատկերող էսսեները, որոնք հենց նրանց փառք բերեցին, այլ այսպես կոչված «արևելյան պատմությունները»:

«Արևելյան պատմվածք» (Oriental tale) տերմինը, որը վաղուց ի վեր հաստատվել է անգլիական գրականագիտության մեջ, բավականին պայմանական հասկացություն է: Այն նկատի ունի արևելյան սյուժեով անգլիական արձակի ամեն մի գործ, անկախ ժանրային առանձնահատկությունից և նպատակամղվածությունից: Իսկ «Արևելք» ասելով հասկացվել են եզրիպտոսից և Մերձավոր Արևելքից մինչև Չինաստան ընկած երկրները: Արևելյան սյուժեները նվիրյալ են թափանցել դեռևս միջին դարերում: Թարգմանությունները իրականացնում էին միսիոներները, խաչակիրները, ճանապարհորդները և այլն:

XVIII դարի սկզբին Անգլիայում բարենպաստ պայմաններ են ստեղծվում «արևելյան պատմվածքի» հաջողության համար: Դրանցից կարևորագույնը ռեակցիան էր կլասիցիզմի հանդեպ: Արևելյան սյուժեների հաջողությունը պայմանավորված էր նրանց ռոմանտիկական բնույթով: Կաշկանդված կլասիցիզմի խստիվ կանոններով և դարի ռացիոնալիզմով, XVIII դարի մարդիկ իրենց զգացմունքներին և երևակայությանը բավարարություն տալու այլ ալկունքներ էին որոնում: Հաջողությանը նպաստեց և այն, որ «արևելյան պատմվածքը» եկավ Ֆրանսիայից, իսկ 1660 թ. սկսած Անգլիայում իշխող էր ֆրանսիական ազդեցությունը, գրականության մեջ հետևում էին ֆրանսիական մոդաներին: Հաջողության մի այլ պատճառն էլ այն էր, որ փիլիսոփաները և երկրաբանները արևելյան սյուժեները հարմար ձև համարեցին հասարակության աֆատների այլաբանական քննադատության, փիլիսոփայական գաղափարների լուսաբանության, ինչպես նաև բարոյական խրատի համար: Դրա փայլուն օրինակներն են Մոնտեսքյուի «Պարսկական նամակները», Վոլտերի «Զագիգը», Գոլդսմիթի «Չինացու նամակները» և այլն: Արևելքի հետ կապերի ամրապնդմանը զուգընթաց աճում էր հետաքրքրությունը «Հազար ու մեկ գիշերվա հեքիաթների» նկատմամբ: Նրանք սկսեցին նկատելիորեն ազդել Արևմուտքի գրականության վրա:

XVIII դարում մենք չենք հանդիպում արևելյան սյուժեների հայկական մշակումների, ինչպես դա եվրոպայում էր: Սակայն նկատելի է մի այլ երևույթ՝ ակնհայտ: հետաքրքրություն հնդկահայ թարգմանիչների մոտ դեպի արևելյան սյուժեների անգլիական մշակումները: «Ազդարարում» տպագրված երեք թարգմանական գործերից երկուսը «արևելյան պատմվածք» են: Որոշ ժամանակ անց Հովհ. Ավդալյանը թարգմանում է Աղիսոնի, Ջոնսոնի, Գոլդսմիթի և այլ ան-

⁴ „The Spectator“. A corrected edition. 8 vols., 1806, v. 1, p. 37.

պլիտացի հեղինակների մի տասնյակի հասնող «արևելյան պատմվածքները» իր «Անգիտաց անպետ» ժողովածուի համար, առանձին գրքով հրատարակում է Ջոնսոնի «Ռասսելասի» թարգմանությունը:

Ինչպես որ Իտալիան և առավել շափով Ֆրանսիան, արևելյան սյուժեները անպլիական գրականության մեջ փոխանցողների դեր կատարեցին, ճիշտ նույնպիսի միջնորդի դեր է խաղում Անգլիան հայ գրականության համար այդ ժամանակահատվածում: Այն տարբերությամբ, որ հայերը սահմանափակվում են թարգմանություններով: Ի տարբերություն եվրոպացիների, հայերի համար Արևելքը «անծանոթ», «տարօրինակ», «խորհրդավոր» և այդ իսկ պատճառով էլ ձյուղական հմայք ունեցող «Far East» չէր: Արևելքը այստեղ ընկալվում էր համարյա որպես սեփական միջավայր: Մանավանդ եթե խոսքը վերաբերում էր Մերձավոր Արևելքին և կամ Հնդկաստանին: Ավելին, «արևելյան» պատմվածքները նրանց ավելի մոտ էին, քան եվրոպականը: Նրանցում հայ ընթերցողը գտնում էր շատ ծանոթ բաներ՝ հերոսների անունները, տեղանուններ, սովորույթներ, կենցաղի տարրերի նույնատիպությունը: Այդ գրական երկերի միջոցով ավելի դյուրին էր հայ ընթերցողի գիտակցությանը հասցնել այն գաղափարները, որոնք քարոզում էին եվրոպացի և հայ լուսավորիչները:

Անպլիական բարքերը, կենցաղը կամ բնավորությունները պատկերող Ադիսոնի, Ստիլի, Ջոնսոնի, Գոլդսմիթի ակնարկները, տպագրված նրանց պարբերականներում, խորթ և օտարոտի պիտի թվային հայերին: Անպլիական հասարակական արատների ծաղրը (մենամարտերը, կեղծամ կրելը, մողանները և այլն) հաղիվ թե որևէ բան ասեին հայի սրտին կամ մտքին և, որ զլխավորն է, հայկական միջավայրում դա ոչ մի բանի չէր ծառայելու:

Սխալ կրիներ նաև արևելյան սյուժեներին դիմելը որակել որպես ռեակցիա կլասիցիզմի դեմ, ինչպես դա Ֆրանսիայում և Անգլիայում էր, որովհետև XVIII դարի վերջին և XIX-ի սկզբին հայկական կլասիցիզմի՝ որպես տիրապետող գեղարվեստական պրակտիկայի մասին կարելի է խոսել վերապահությամբ, նկատի ունենալով միայն Մխիթարյաններին:

Մյուս կողմից, անպլիական «արևելյան պատմվածքներ» հանդեպ դրսևորված հետաքրքրության մեջ մենք չենք կարող շտեմել ևս մի ապացույցը այն բանի, որ հնդկահայ գաղութի գրավոր մշակույթը հենց սկզբից զոգացման այնպիսի հունով էր դնում, որը տանում էր դեպի կլասիցիզմի արվեստից տարբեր, ավելի հանրամատչելի գրական ձևերի, ժանրերի, արտահայտչամիջոցների որոնումները:

Ի տարբերություն արևմտյան հայ գաղութների, որտեղ յուրացնում էին ֆրանսիական կլասիցիզմի գեղարվեստական փորձը, հնդկահայ գրողների մոտ նկատելի է այլ միտում՝ կողմնորոշումը դեպի XVIII դարի անգլիական լուսավորական, բարոյախոսական գրականությունը:

«Ազդարարում» տպագրվում են ոչ թե Կորնելի, Ռասինի, Բուալոյի կամ անգլիացի կլասիցիստ Ջ. Միլտոնի երկերը, ինչպես Մխիթարյանների տպագիր օրգան «Բազմավեպում» էր, այլ անգլիացի լուսավորիչներ, լրագրողներ Ադիսոնի և Ստիլի «արևելյան պատմվածքները» և մանկագիր Թ. Դեյի արկածային վիպակը: Վենետիկում, Մխիթարյանների գպրոցում, աշակերտների ուժերով բեմադրվում են պատմական բովանդակության պիեսներ: Կալկաթայում XVIII դարի 20-ական թթ. բեմադրվում է Մարգար Մկրտչյանի առաջին հալ կենցաղագրական կատակերգությունը՝ «Խտրադիմայ գժրողութեան»:

⁵ Վենետիկի հայ կաթոլիկական միաբանության գիտնականները և գրողները միայն աշխարհագրական առումով չէ, որ մոտ էին Ֆրանսիային և իտալական կլասիցիզմի ձևավորման կենտրոններին: Իտալերեն և ֆրանսերեն լեզուների իմացությունը, կաթոլիկական եկեղեցուն պատկանելը նրանց դարձնում էր ավելի դյուրընկալ հանդեպ ուսմանական մշակույթի և ֆրանսիական գրական ազդեցությունների:

⁶ «Հնդկահայ տպագրական ոլորտի հրատարակությունները մի առանձնահատկություն ունեն,— գրել է մատենագետ Չ. Դավթյանը,— նրանք թեև գրուար են, բայց գերազանցապես ոչ կրոնական, աշխարհիկ բնույթի են»: Տե՛ս Չ. Դավթյան. Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թ. Երևան, 1964, էջ 36:

Կալկաթայում հիմնված «Շահմարան» (1822) պարբերականում տպագրվում են ժողովրդական երգիչների գործեր (Բաղեն օղլի, Ղուլ Արղան), հատվածներ Շեքսպիրի «Համլետից» և «Երկու վերոնացիներից»:

Ավդալյանը XVIII դարի անգլիացի հեղինակների գործերից բացի թարգմանել է ռոմանտիկ Շատոբրիանի «Աթալան» (1826)⁷ ոչ կլասիցիստական գրական նախասիրությունների ամենախոսուն վկայությունը:

Հնդկաստանի անգլիացի նվաճողների հետ կողք-կողքի երկարամյա գոյակցության հետևանքով հայ մտավորականները անխուսափելիորեն պետք է հաղորդակից դառնային անգլիական կուլտուրային և գրականությանը: Այստեղ անգլերենի միջոցով հայերը ծանոթանում են նաև XVIII դարի ֆրանսիացի լուսավորիչների գործերին: Այդպիսի միջնորդի գեր Մխիթարյանների համար խաղում էր ֆրանսերենը (անգլիական և դեռմանական կուլտուրային հաղորդակից լինելու համար): Այնպես, ինչպես Հ. Բժշկյանը Վենետիկում «Ռոբինզոն Կրուզոյի» առաջին հայերեն թարգմանությունը կատարեց ֆրանսերեն սեքստից (1818 թ.), ճիշտ այդպես էլ Թ. Սոգինյանցը Մադրասում Վոլտերի Պետրոս I-ի կենսագրության հայերեն թարգմանության համար օգտվում է նրա անգլիական տարբերակից:

Հարկ է նշել, սակայն, որ որպես հակակլասիցիստական տենդենցների կրողներ հնդկահայ գաղութում XVIII դարի վերջին—XIX դարի առաջին տասնամյակներին հանդես են գալիս ոչ այնքան գրողներ (որովհետև մինչև Ավետույանի, Թադիսայանի հանդես գալը այդ գաղութը գեղարվեստական գրականության ասպարեզում առաջ չբաշխեց քիչ թե շատ նշանավոր անուններ), որքան հրապարակախոսները, լրագրողները, թարգմանիչները, հուշագրողները: Դա կարելի է մասամբ բացատրել նոստալ, որ այստեղ չկար այն անմիջական գրական միջավայրը, ինչ որ կար Իտալիայում գործող Մխիթարյանների համար, ուր XVIII դարի ընթացքում ստեղծագործել են Կ. Գուլոնին, Կ. Գոցցին, Վ. Ալֆիերին և այլք:

Ավելի կարևորը թերևս այն էր, որ այդ գաղութում, որը ավելի բազմամարդ էր և ընդգրկում էր դեմոկրատական խավի մի ստվար զանգված, սկիզբ առած լուսավորական շարժումը խթանեց գրավոր խոսքի այնպիսի ձևերի աշխուժացումը, որոնք անմիջականորեն արձագանքում էին գաղութի օրվա պահանջներին:

Հնդկահայ գաղութի գործիչները փայփայում էին ազգի ազատագրության նույն քաղաքական ծրագրերը, ինչ որ Մխիթարյանները, սակայն նրանց առջև ծառանում էին խնդիրներ, որոնք թելադրված էին գաղութի կյանքի ընթացքով:

«Ազգաբար» լեզվական անփութությունները, լեզու, որը ներկայացնում էր քայքայվող գրաբարի և բարբառների (հիմնականում Զուղայի) խառնուրդ, ընթերցող լայն խավերին հասկանալի լինելու ձգտման ակամա արդյունքն էր:

Աղիստնի «Միրզայի տեսիլքը» սկզբնապես տպագրվել է «Հանդիսատես» ամսագրում⁸: Հայ թարգմանիչը, որի անունը մեզ հայտնի չէ, իր ձեռքի տակ անշուշտ ունեցել է այդ գործի հետագա հրատարակություններից որևէ մեկը: XVIII դարի ընթացքում Ստիլի և Աղիստնի պարբերականների՝ «Շատախոսի», «Հանդիսատեսի», «Խնամակալի» հատընտիր նյութերի ժողովածուների բազմաթիվ վերահրատարակություններ են եղել⁹:

Իր «արևելյան պատմվածքում» Աղիստնը դիմել է տեսիլքի միջնադարյան գրական ձևին՝ փիլիսոփայական հարցադրումների համար՝ ո՞րն է կյանքի իմաստը և ի՞նչ կերպ պիտի մարդն անցնի իր կյանքի ուղին: Ժանոի ավանդույթի սկզբնավորողը միջնադարյան անգլիական գրականության մեջ Ուիլյամ Լենգլենդն է, իր «Վար անոդ Պետերի տեսիլքը» (1362թ.) այլաբանական պոեմով:

⁷ Joseph Addison. The Vision of Mirza.—The Spectator, 1711, № 159.

⁸ Տե՛ս՝ The Beauties of the Spectators, Tatlers and Guardians. 2 vols., 1763, 1783; Histories, Fables, Allegories and Characters selected from the Spectator and Guardian. 1753, 1765 8th edn; „Selections from the Spectator, Tatler, Guardian and Freeholder“, ed. A. L. Barbault.

Միջնադարյան մտածողությանը բնորոշ էր վերացական գաղափարներին առարկայական գոյություն վերագրելը: Միջնադարյան մարդը չէր կարողանում արատրակցիան ընկալել կոնկրետ մարմնավորումից դուրս: Միջնադարյան տեսիլքներում մարդկանց նման գործում և խոսում էին «խիղճը», «Բանականությունը», «Ըշմարտությունը», «Մուտը», «Մուլությունը» և այլն:

Ադիսոնը, որն իր բարոյաէթիկական քարոզի համար հաճախ է դիմել այլաբանության, դիցաբանական և անտիկ սյուժեների, սլաոմական օրինակների և այլն, պանց շի առել նաև տեսիլքի ձևից օգտվելու հնարավորությունը: Սակայն նա վարվել է զգուշորեն, իր «Տեսիլքը» արեւելյան սյուժեի մեջ ամփոփելով: Արեւելքը որպես գործողության վայր («Բաղդադի մերձակա լեռները» և «Բաբելոնի հովիտը») այն անծանոթ, խորհրդավոր, կարծես իրականությունից դուրս միջավայրն էր, որը հնարավոր էր դարձնում նոր ժամանակներում տեսիլքի ձևին դիմելը:

Հետագա արեւելյան սյուժեներով զրոզ որոշ անգլիացի հեղինակների մոտ մենք հանդիպում ենք Ադիսոնի այս փորձի ընդօրինակություններին, ինչպիսիք են Ս. Զոնսոնի «Օրտոգրուլը Բասրայից», Բիթթիի «Տեսերիֆի ձգնավոր Թեոփորոսի տեսիլքը»⁹, Հաքսվորթի¹⁰ «Դերվիշ Ալմետը» և այլն¹¹:

«Միրզայի տեսիլքում» պատմվում է, թե ինչպես «Լուսնի հինգերորդ օրը» առավոտյան վաղ բարձրանալով Բաղդադի մոտակա լեռները, Միրզան մտադրվում է օրն ունց կացնել աղոթքներում և խորհրդածություններում: Հովիտի կերպարանքով հայտնված հոեշտակը Միրզային ականատես է դարձնում սեսիլքի: Միրզան տեսնում է մարդկային ամբոխներ, որոնք անցնում են կյանքի կամուրջով, տեսնում է, ինչպես են անցնողները վաղ թե ուշ կամուրջից ընկնում անդրշիրմյան աշխարհի ջրահոսքի մեջ: Կային այնպիսիները, որոնք կառնում էին բաղրիքից՝ ջանալով մնալ կամուրջի վրա, բայց ի վերջո ընկնում էին՝ հոգնած դժվարին ուղուց և ապարդյուն ճիգերից: Ոմանք ընկնելիս փորձում էին փրկվել կառնելով ուրիշներից: Այլոք, հուսով հայացքներն ուղղում էին երկնքին, սակայն սրանք էլ վերջիվերջո ընկնում էին աղոթքներում մտաբուլված: «Կամուրջի վերևը սավառնող թռչունները, ագռավները, ուրունները, անգղները և այլն,— բացատրում է հոեշտակը,— դա նախանձն է, շարությունը, ընչաբաղցությունը, փառասիրությունը և այլ կրքեր, որոնք իշխում են մարդկային կյանքի վրա»:

Երկար դիտում է Միրզան այս տեսիլքը, համակվելով դառնությունամբ այն մտքից, որ մարդու կյանքի ուղին դժվարին է և տառապալից, իսկ վերջում նրան անխուսափելի մահ է սպասում: Տեսնելով Միրզայի հուսահատությունը, հոեշտակը խորհուրդ է տալիս դեմքը շրջել այդ անմխիթարական տեսարանից և նայել հակառակ ուղղությամբ: Մյուս կողմում Միրզան տեսնում է անեղ մի ծով և «Ադամանդե լեռ», որը ծովը բաժանում է երկու մասի: Մի մասի վերելվում մուսլի, մթին ամպեր են, որոնցից այն կողմ ոչինչ չի երևում: Մյուս մասում բազմաթիվ գեղատեսիլ կղզիներ են, ծածկված կանաչ մարգագետիններով, թաղված ծաղիկների և մրգատու ծառերի մեջ: Այնտեղից լսելի է թռչունների դալլալը և աղբյուրների կարկաչը: Միրզան տեսնում է մարդկանց, որոնք հագած ունեն «փառքի հանդերձանքներ» և դուխներին կրում են ծաղկեպսակներ: Այս երկրորդ տեսիլքը սփոփում է Միրզային և նրա հոգին ցնծությամբ լցնում: Նրա մեջ ցանկություն է առաջանում թևեր ունենալ այդ երջանիկ վայրը թռչելու համար: Սակայն հոեշտակը պատասխանում է, որ դեպի այնտեղ ճանապարհ չկա, քանի որ դա արդար հոգիների կացարանն է, որին նրանք արժանանում են հետմահու: Համաձայն իրենց ապրած կյանքի նրանք ընկնում են տարբեր կղզիներ:

⁹ James Beattie (1735—1803)—անգլիացի գրող, գրականագետ, բարոյագետ:

¹⁰ John Hawkesworth (1715—1773)—անգլիացի դրամատուրգ, լրագրող, հրատարակիչ:

¹¹ Առաջին երկու գործերը Հովհ. Ավդալյանի թարգմանությամբ տպագրվել են «Անգլիտաց տնայետ» ժողովածուում (տե՛ս էջ 4—8, 37—62):

Միրզան այնուհետև ցանկանում է իմանալ, թե ի՞նչ կա թաքնված «Աղա-մանդե լեռան» մյուս կողմի մթին ամպերի տակ: Սակայն պատասխան չի ստանում, որովհետև հրեշտակը անհետացել էր: Իսկ տեսիլքի տեղում առաջվա նման Բաբելոնի ընդարձակ հովիտն էր և այնտեղ արածող ուղտերի, կովերի, ոչխարների հոտերը:

Կյանքը որպես ճանապարհ և մարդիկ՝ անցորդներ այլաբանությունը հանդիպում է նաև ուրիշ «արևելյան պատմվածքներում»: Ս. Ջոնսոնի «Օբադիան, Աբենսիմի որդին» («Obadiah, the Son of Abensime.—„Rambler“, № 65) պատմվածքը դրա լավագույն օրինակներից է: Ավդալյանը թարգմանել է այս գործը¹²:

Աղիսոնը այդ այլաբանությանն անդրադարձել է նաև իր «Դերվիշը» առակում, որը վերցրել է ժան Շարդենի «Ուղղեգրություններից»: Դերվիշը շահի պալատը անվանում է հյուրանոց: Երբ շահը ծիծաղում է նրա վրա ալ «շփոթմունքի» համար, դերվիշը պատասխանում է, որ եթե այդտեղ սկզբում ապրել են շահի նախնիները, հետո պապը և հայրը, այժմ ինքը, իսկ իրենից հետո կապրեն նրա որդիքը, թոռները և այլն, ապա ուրեմն ինչ է այն, եթե ոչ «քարվանսարա»¹³:

Այստեղ բացահայտ է Աղիսոնի կապը XVII դարի բարոյագետ Ջոն Բենյանի¹⁴ հետ, որի ազդեցությունը XVIII դարի անգլիական գրականության վրա ընդհանրապես մեծ է եղել: Իր «Ուխտագնացի ուղին» (1678 թ.) այլաբանական վեպում Բենյանը նկարագրելով հերոսի՝ Քրիստոնեի ճանապարհորդությունը դեպի «Երկնային քաղաք», նկատի ունի մարդու կյանքի ուղին իր բոլոր վատ ու լավով՝ սխալներով, զայթակղություններով, հուսախաբություններով, տառապանքներով ու վերելքի պահերով, հաջողություններով, ուրախություններով և այլն: Նա իր ճանապարհին հանդիպում է բարեկամների ու թշնամիների, վախկոտների ու խիղախների, մարդկանց, որոնք ղեկավարվում են ընկերակցության սկզբունքներով ու եսասերների: XVII դարի դեմոկրատական, պուրիտանական գրականության դիրքերից Բենյանը համակրանքով է պատկերել իր Ուխտագնացին: Դա արդարամիտ, անխախտ բարոյական սկզբունքների տեր ժողովրդի մարդն է, արհեստավորը: Բենյանը դիմում է իր ժամանակակիցին, որը տենչում էր իմանալ, թե ո՞րն է ճիշտ ապրելակերպը, որը երազում էր ազատագրվել կյանքի դժվարությունների բեռից: Բենյանի այլաբանության մեջ, ըստ էության, ամփոփված է ռեալ բովանդակություն: «Երկնային քաղաքը, — գրել է Ջ. Լինդսեյը, — բոլոր անգլիացիների, ամբողջ մարդկության իղձն է»¹⁵: Բենյանի այլաբանության ուժը և համոզչությունը պայմանավորված է նրա ռեալիզմով և հետաքրքրությամբ դեպի կյանքի այն խնդիրները, որոնք զբաղեցնում էին նրա ժամանակակիցներին: Ուխտագնացը ապրում է այն կյանքով, որին ականատես էր Բենյանը կոնկրետ վայրում և կոնկրետ ժամանակահատվածում:

Աղիսոնը, հենվելով Ջ. Բենյանի կողմից սկիզբ դրված գրական ավանդույթի վրա, օգտագործել է այն իր բարոյաէթիկական քարոզի համար՝ մարդը պետք է ապրի արժանավայել կերպով, տուրք չտալով ստոր հակումներին և կրքերին, որպիսիք են ընչամոլությունը, ագահությունը, փառասիրությունը, նախանձը, չարությունը և այլն: Ինչպես և Բենյանը, Աղիսոնը բարձրացող բուրժուազիայի դիրքերից ելնելով ձևավորում էր նոր էթիկական սկզբունքներ: Նա նպաստեց ռացիոնալիստական մտածելակերպի զարգացմանը: Նա հավատ էր ներշնչում մարդու հոգեկան և բարոյական կարողությունների նկատմամբ:

¹² Տե՛ս Անդիսաց անպետ, էջ 126—135:

¹³ Այս առակը «Քրիստոսի» վերնագրով նույնպես տպագրված է «Անգլիաց անպետում» (էջ 22—24): The Dervish.—The Spectator, № 289.

¹⁴ John Bunyan (1628—1688).

¹⁵ J. Lindsay. John Bunyan, Maker of Myth. 1936, p. 194.

Ասա ինձ, Միրզա,— հարցնում է հրեշտակը, այն բանից հետո՝ երբ նրան ի ցույց դրեց «Օրհնյալ կղզիներին» տեսիլքը,— չարժէ՞, արդյոք ջանալ հանուն այդպիսի ապրելակերպի։ Հիմա է՞լ կյանքը քեզ թվում է անիմաստ և ունայն, եթե նա այդպիսի պարզևի արժանանալու հնարավորություն է ընձեռում։ Արժև՞ արդյոք վախենալ մահից, եթե նա հանգեցնում է այդպիսի երջանիկ վիճակ նվաճելուն։ Մի մտածիր այլևս, որ մարդու կյանքը անիմաստ է, եթե նրան սպասում է այդպիսի հավիտենական երանություն։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ իր փիլիսոփայական պատմվածքում Ադիսոնը հետապնդում է նույն գործնական, բարոյաէթիկական նպատակները, ինչ որ իր բարոյախոսական էսսեներում։ Ադիսոնի կերպարները վերացական էին, սակայն նրա ստեղծած պատկերների գեղարվեստական արտահայտչականությունը և ներգործական ուժի շնորհիվ ընթերցողները նրա այլաբանական նկարագրությունների հետևում տեսնում էին կյանքի իրական իրավիճակներ ու վարքագիծ, հաղորդակից էին լինում պարզ և հստակ արտահայտված բարոյական խրատի՝ որ առաքինի կյանքի համար սպասվում է պարզև, և ընդհակառակը։

Ադիսոնի «Տեսիլքը» չէր ահաբեկում, նրանում ցույց չէին տրվում մեղավոր հոգիների տառապանքները, մթին ամպերը թույլ չեն տալիս տեսնել, թե ի՞նչ է կատարվում մռայլ քողի հետևում, այլ քաջալերում, ոգևորում էր «Օրհնյալ կղզիներին» դրախտային կյանքի պատկերներով։ Այստեղ Ադիսոնի դոմաբուլլը բավականաց է, կենսախիզ։ Մարդկանց կեցվածքը արտահայտում էր անդորր և երջանկություն։ «Միրզայի տեսիլքը» իրավամբ դասվում է «Հանդիսատեսում» տպագրված մեկ տասնյակի հասնող ամենակատարյալ ստեղծագործությունների թվին։ Այն մոտ հարյուր տարի կայուն հաջողություն ունեցավ ընթերցողների շրջանում։ Այդ ընթերցանությունից ստացած անջնջելի տպավորության վկայությունները մենք գտնում ենք հետագա անգլիական գրականության մեջ։ Ս. Ջոնսոնը իր «Օրոտորուրը Բասրայից» պատմվածքում բացահայտորեն կիրառել է «Միրզայի տեսիլքի» սյուժետային կառուցվածքը։ Վ. Սկոտի «Ծովահենը» վեպում, երբ հերոսը՝ Մերտոնը, այցելում է Շոտլանդիայի հյուսիսի առափնյա վայրը, նրա առջև բացված տեսարանը նրան հիշեցնում է «Միրզայի տեսիլքից» մի պատկեր¹⁶ և այլն։

Ադիսոնի «Միրզայի տեսիլքի» հայերեն թարգմանությունը տպավորիչ գեղարվեստական միջոցներով հայ ընթերցողներին հաղորդակից էր անում այն բարոյաէթիկական սկզբունքներին, որոնք քարոզվում էին «Ազդարարի» էջերում։ Շմավոնյանը, հավատարիմ մնալով քրիստոնեության բարոյախոսության պատվիրաններին, դրանք միահյուսում էր լուսավորության դարի պահանջների հետ։ Շմավոնյանի և մյուս լրագրողների նպատակը հնդկահայ գաղութը լուսավորելու, ազատագրական գաղափարներին հաղորդակից անելու միջոցով վերածնված հայրենիքում նոր կյանք նախապատրաստելն էր։ Ադիսոնի այլաբանությունը հնարավորություն էր ընձեռում նրա մեջ սեփական հայկական ենթատեքստ գտնել։

Ադիսոնի պատմվածքը կարծես հրահանգում էր. հայերը իրենք պետք է նվաճեն «Օրհնյալ երկրում» իրենց ապագա գոյատևման իրավունքը։ «Օրհնյալ կղզիները» նրանց հայրենիքն էր, նախնիների հողը։ Պատմվածքի տպագրությունը ամսադրի առաջին իսկ համարում նրան ծրագրային իմաստ էր տալիս։

Նույն բարոյախոսական նպատակներին պետք է ծառայեր «Ազդարարի» երկրորդ համարում տպագրված Ռ. Ստիլի «Սանտոն Բարսիսայի պատմությունը»¹⁷, որի սյուժեն վերցված է «Պարսկական և թուրքական հեքիաթների»

¹⁶ St. W. B. Scott. Собрание сочинений. Т. 19, М.—Л., 1963, с. 362.

¹⁷ Richard Steele. The History of Santon Barsisa.—The Guardian, 1713, № 148.

ժողովածուից¹⁸։ Սա կարճ դեպքերի սրբնթաց զարգացումով, դրամատիզմով լի մի գործ է։

Սանտոն Բարսիսան, ողջ արևելքում բարեպաշտի և սրբի հռչակ վայելող մի անձ, որի աղոթքներին ղորեղ բուժիչ ուժ են վերագրում, սատանայի դրոմամբ սկզբում լլկում, ապա սպանում է բուժելու համար իր մոտ բերված արքայադստերը։ Պատմվածքը հիշեցնում է ղոկտոր Ֆաուստի լեգենդի վաղապույն մշակումները, որոնցում հերոսի անկումը պայմանավորված էր նրա մարդկային թուլություններով՝ մարմնական ցանկություններին բավարարություն տալու նրա եսասիրական ձգտումներով։ Պատմվածքի սկզբում ակնարկ անգամ չկա սատանայի հայտնվելու մասին, և ընթերցողը նախապատրաստված է սյուժեի այսօրինակ շրջադարձին։ Իր Սանտոնի համար ևս դա անակնկալ է։ Հար դիտավորությունը նրա մեջ հղանում է հանկարծակի և անսպասելիորեն։ Սանտոնը թեև ծեր է, հիվանդ, սակայն աղքատ գեղեցկությունը նրա վրա մեծ տպավորություն է թողնում։ Ահա այդ պահին հայտնված սատանան շնջում է նրա ականջին՝ «բաց մի թողնի պատեհ առիթը»։

Սանտոնը հայտարարում է պալատականներին, որ բուժելու համար աղքիկը պետք է մնա իր մոտ մինչև առավոտ։ Սատանայի հայտնվելը հերոսի մեջ մեղսալի ցանկություն առաջանալու կարծես միայն արձագանքն է։ Սատանան վստահ է, որ մարդն իր էությունը հակված է ամեն ինչ մոռանալ հանուն վայրկյանական հաճույքների։ Արատները, սեփական կրքերը սանձահարելու մարդու անկարողությունը նրան բերում են տառապանքներ և կործանում։ Սատանայի չորդարկված խորհուրդները բխում են դեպի մարդը տաժած նրա արհամարհանքից։ Գիշերը սատանան դարձյալ շնջում է՝ «մի փախցնի հնարավորությունը», և Սանտոնը ոգով այնքան թույլ է գտնվում, որ լսում է «մարդկություն թշնամուն»։ Սատանային հատկացված է երկրորդական դեր։ Նա միայն կոհում է հերոսի ցանկությունները և դրանք իրականացնելու գործնական միջոցներ է առաջարկում։ Երբ մեղք գործելուց հետո Սանտոնը տաքնապ է ապրում և կշտամբում է սատանային, վերջինիս պատասխանը հնչում է սթափ և գործնական. «Մտածիր ոչ թե այն մասին, ինչ արդեն եղել է, այլ նրա մասին, որ աղքիկը հղի է, որ քո հանցանքը կբացահայտվի, և կաչսրը քեզ տանջալի մահի կենթարկի»։ Հանցանքը հանցանք է ծնում։ Սատանայի խորհրդով Սանտոնը սպանում է աղջկան։ Այս պահից նա ամբողջապես ենթարկված է սատանայի կամքին։ Մատնված նրա իսկ կողմից, վերջին պահին, փրկվելու հույսով նա կատարում է սատանայի վերջին պահանջը՝ երգվում է հավիտենապես նրան հավատարիմ մնալ։ «Օ, Սանտոն,— բացականչում է սատանան,— ես բավարարված եմ, քանզի ստացա ինչ ցանկանում էի՝ քո հողին»։ Իսկ Սանտոնը մահ է ընդունում։

Ստիլը Աղիստնի նման համոզված է, որ մարդն ինքն է ընտրություն կատարում՝ առաջնորդվել առողջ բանականությամբ, պարտքի գիտակցությամբ և խղճի թելադրանքով, թե գերի մնալ անասնական բնազդներին։ Մարդու ուղեկիցն է գալթակղություն և շարի ոգին։ Նրա դեմ մաքառելով և հաղթահարելով է մարդը դառնում կատարյալ։ Ստիլի պատմվածքին հատուկ է պուրիտանական անզիջողականությունը արատների հանդեպ։ Ռոմանտիկական արևելյան սյուժեն հնարավոր է դարձնում ցույց տալ խիստ պատժի անխուսափելիությունը։

Պատմության բարոյախոսությունն ամփոփված է հայ թարգմանչի հետևյալ եզրակացության մեջ. «Դիտասցեն այսու դի խոկմունք շարք երբեմն, և ևս նեն ի բարեգունեղ մտաց, ղոր եթէ արգելցեն վաղվադակի յորժաս յայտնես»

¹⁸ The Persian and Turkish Tales Complate, 1708. Այս դրքից են վերցված նաև «Հանդիսատեսում» տպագրված Ստիլի երկու ֆանտաստիկ պատմվածքների սյուժեները՝ «Շեյխ Չեհաբեդդինը և Նգիպուտոսի Մուլթանը» (Chech Chehabbeddin and the Sultan of Egypt.—The Spectator, № 94), Սուլթան Մահմուդի և երկու խաբեբաների պատմությունը» (Fable of the Sultan Mahmoud and Two Ovis.—The Spectator, № 512)։

ցի՝ չէ լինելու քրեական, և պարտ է ծածկել զգուշու իշարգանաի իբրև յառաջին յորդորիչ առ մեղս, վստն զի մոլութիւն բնականապէս օնանի դմութիւնն, և երբեմն քաջ մի սահիւն առաքինութենէ՝ յաճախապես յետինն աշնալիսի դիպուածը չարք, և առաջնորդին ի յավերումն թարց ահսանելոյ նախապէս»¹⁹:

Այսպիսով պարզ է դառնում, որ «Ազգարարի» խմբագիր Հ. Շմավոնյանը, ապագրելով Ադիսոնի և Ստիլի «արեւելյան պատմվածքները», նպատակ է ունեցել ծառայնցնել դրանք հայ դադթօջախի բարոյական դաստիարակութեանը: Սակայն այդ գործերի երկու «Ազգարարի» էջերում հետաքրքրական է նաև այն առումով, որ բնութագրում է հայ լրագրութեան սկզբնավորողների կողմնորոշումը դեպի անգլիական լուսավորական մամուլը:

Բացի այդ, գեղարվեստական նյութի աշտօրինակ բնորոշյան մեջ մենք տեսնում ենք հնդկահայ դադթօջախի գրականութեան համար բնորոշ հակակախիցիսական միտումի գրանորումը, հակվածութունը դեպի լուսավորութեան դարի ավելի դեմոկրատական գրականութունը:

РАССКАЗЫ АНГЛИЙСКИХ ПИСАТЕЛЕЙ АДДИСОНА И СТИЛЯ В «АЗДАРАРЕ»

М. М. АСЛАНЯН

Резюме

Рассказы «Видение Мирзы» и «История Сантона Барсиса», напечатанные анонимно в первых двух номерах «Аздара» (Мадрас, 1794), до сих пор относились к числу неатрибутированных материалов журнала. Мы выяснили, что авторами этих произведений являются основоположники английской периодической печати Джозеф Аддисон и Ричард Стиль. «Видение Мирзы» было впервые напечатано в «Зрителе» («The Spectator», 1711, № 159), а «История Сантона Барсиса» — в «Опекуне» («The Guardian», 1713, № 148). Аддисон и Стиль подчинили свои «восточные повести» задачам практической философии и нравственно-этической проповеди. Нет сомнения в том, что редактор «Аздара» А. Шмавонян, печатая эти рассказы, преследовал те же цели. Появление «восточных повестей» Аддисона и Стиля на страницах первого армянского журнала представляет интерес и в другом плане. Это еще одно свидетельство того, что зачинатели армянской журналистики ориентировались на английскую просветительскую периодику XVIII в. Кроме того, в выборе данного художественного материала проявилась характерная для литературы армянской колонии Индии антиклассцистическая тенденция — тяготение к литературным жанрам английского Просвещения (публицистика, очерк, приключенческий жанр, «восточная повесть», мемуары и т. п.), к общедоступным выразительным средствам.

¹⁹ «Ազգարար», № 1, էջ 68: